Անցկացվեց Լոռու մարզպետի մամլո ասուլիսը

Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը փետրվարի 1-ին հանդես եկավ մամլո ասուլիսով: Ներկա էին մարզային և համայնքային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև հանրապետական լրատվամիջոցների մարզային թղթակիցներ:

Ասուլիսին մասնակցում էին մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, պատասխանատու այլ պաշտոնյաներ:

Մինչ հարց ու պատասխանին անցնելը, լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան դիտելու 2021թ. Լոռու մարզում իրականացված աշխատանքներն ամփոփ կերպով ներկայացնող տեսաֆիլմ, որտեղ անդրադարձ էր կատարվում մասնավորապես քաղաքաշինության, ճանապարհաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի և սպորտի, հողաշինության և հողօգտագործման, զարգացման ծրագրերի և զբոսաշրջության, տեղական ինքնակառավարման և այլ ուղղություններով տարված աշխատանքներին:

Ամփոփ տեղեկանքը ներկայացված է նաև հետևյալ հղումով.

http://lori.mtad.am/news/item/2022/02/01/news10/

Մարզպետ Արամ Խաչատրյանը, ողջունելով լրատվամիջոցների ներկայացուցիչներին ասուլիսին ներկա գտնվելու համար, ևս մեկ անգամ հավաստեց իր և մարզպետարանի պաշտոնյաների բաց, թափանցիկ և հաշվետվողական աշխատելու պատրաստակամությունը, ինչի մասին են վկայում նաև պարբերաբար կազմակերպվող ասուլիսները, ճեպազրույցները և հարցազրույցները:

Լրատվամիջոցների հարցերը հիմնականում վերաբերում էին Վանաձորում նախորդ տարեվերջին, ՏԻՄ ընտրություններով պայմանավորված, ստեղծված իրավիճակին և հարցի հնարավոր հանգուցալուծմանը, քաղաքում տասնամյակներ շարունակվող ապօրինաշինություններին, սուբվենցիոն, ճանապարհաշինական ծրագրերին, առողջապահության ոլորտի կադրային խնդիրներին, հանքերի շահագործման հետ կապված բնապահպանական հարցերին, համայնքների խոշորացման գործընթացներին և այլն:

«Հայաստանի Հանրապետություն» թերթի թղթակից Գագիկ Անտոնյանի՝ «Վանաձոր համայնքի արտաքին տեսքը խաթարող և ճարտարապետական նորմերին հակասող համատարած ապօրինաշինությունների դեմ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում» և «Հանրային ռադիոյի» թղթակից Լուսինե Սարգսյանի Վանաձորում արձանագրված մի շարք ապօրինությունների մասով ձեռնարկված քայլերի մասին հարցերին ի պատասխան՝ Ա. Խաչատրյանը ասաց.

-Ձեր կողմից նշված ապօրինաշինությունները վերաբերում են նախորդ տասնամյակներին, և վերջին ամիսների ընթացքում նման դեպքերը բացառվում են: Լոռու մարզպետարանը նախորդ տարի սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին

ուսումնասիրություններ է իրականացրել Վանաձորի համայնքապետարանում և կոնկրետ ձեր կողմից նշված խնդրի հետ կապված բացահայտվել են խայտառակ փաստեր: Դրանք ներկայացվել են Վանաձորի՝ այդ ժամանակ գործող իշխանություններին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ու նաև իրավապահ մարմիններին: Ներկայում, ինչպես գիտեք, քրեական գործեր են հարուցված, սպասենք իրավապահ մարմինների գնահատականին:
Այս առումով ուզում եմ, որ յուրաքանչյուր վանաձորցի իրեն հարց տա, ի վերջո Վանաձորը 20 տարի շարունակ թալանվե՞լ է, թե՝ ոչ, ակնառու ապօրինություններ եղե՞լ են, թե՝ ոչ, կանաչ տարածքներում և չթույլատրված վայրերում ապօրինի կառույցներ տեղադրվե՞լ են, թե՝ ոչ և այդ ամենը ո՞վ է արել և ինչպե՞ս: Մենք այլևս թույլ չենք տալու, որ այդ բարձիթողի վիճակը շարունակվի, ու այս հարցում շատ կարևոր է լրագրողների, մտավորականների, երիտասարդների, հանրության աջակցությունը, որպեսզի որևէ մեկի մտքով անգամ չանցնի ապօրինի քայլ կատարել: Մինչդեռ այսօր, ցավոք, ականատես ենք լինում հատկապես մտավորականներից շատերի ոչ միայն լռությանը, այլև ոմանք հանդես են գալիս ի պաշտպանություն այդ ապօրինությունները գործած անձանց:
Այսօր հստակ հայտարարում եմ, պետք է պատասխանատվություն կրեն բոլոր այն պաշտոնյաները, ովքեր ապօրինություններ են գործել և չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը:
Մարզկենտրոնում, ընտրություններով պայմանավորված ստեղծված իրավիճակի վերաբերյալ հարցին ի պատասխան մարզպետը նշեց.
-Ինչպես գիտեք, դատական գործընթացներ են ընթանում: «Լուսավոր Հայաստան» կուսակցության հայցը, ինչքան գիտեմ, դեռ Վճռաբեկ դատարանի վարույթ չի ընդունվել: Ինչ վերաբերում է համայնքապետարանի գործունեության բնականոն ընթացքին, ապա որոշակի խնդիրներ կան, բայց և՛ մարզպետարանը, և՛ համայնքապետարանը, անում են ամեն ինչ՝ դրանց լուծում տալու համար: Հուսով եմ, մոտ ապագայում կունենանք համայնքի ղեկավար և այդ խնդիրները արագ լուծում կստանան:
«Լոռու մարզ» թերթի խմբագիր Մանվել Միկոյանի դիտարկմանը, թե՝ կարևոր է պետություն-համայնք ներդրմամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերը նախ ուղղել մարզկենտրոնի կենտրոնական հատվածի՝ այն է՝ Հայքի հրապարակի և հարակից տարածքների ամբողջական բարեկարգմանը, առավել ևս, որ նախորդ տարիներին հրապարակի մասնակի բարեկարգման որակը չի գոհացրել, Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ ինքն անձամբ և Լոռու մարզպետարանը խիստ հետևողական են սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և որակի նկատմամբ:
-Մարզկենտրոնի կենտրոնական թաղամասերի (և ոչ միայն) անբարեկարգ լինելու հետ կապված հարցը, կարծում եմ, պետք է ուղղել նախորդ երկու քաղաքապետերին:

Ինչ մնում է, սուբվենցիոն ծրագրերի արդյունավետ իրականացմանը, ապա անցած երեք տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը, համայնքների հետ համագործակցությամբ, արել է առավելագույնը: Այս ծրագրերը շարունակվելու են և, ի հեճուկս ոմանց, մենք զարգացնելու ենք Վանաձորը, մարզը, մեր երկիրը:
«Անկյուն+3» հեռուստաընկերության լրագրող Մերի Կոլոյանի հարցին՝ Մ6 ճանապարհի Թումանյան –Ալավերդի հատվածի մասով կարծես խնդիրներ կան՝ նախագծերի, աշխատավարձերի և այլնի հետ կապված: Ե՞րբ կկարգավորվեն դրանք: Մարզպետը պատասխանեց.
- Խնդիրներն արդեն կարգավորված են: Մենք անընդհատ կապի մեջ ենք պատասխանատուների հետ: Եղանակային պայմանները թույլ տալուն պես աշխատանքները մեծ թափով կշարունակվեն:
Մոտկորի շրջանի ճանապարհի բարեկարգման վերաբերյալ «Ալիք մեդիայի» թղթակից Տաթև Ճուղուրյանի հարցին ի պատասխան՝ Ա. Խաչատրյանը նշեց, որ ծրագիրը հաստատված է. եղանակային պայմանները թույլ տալուն պես դրանք նույնպես կմեկնարկեն:
«Մեդիա ակումբ» ՀԿ լրագրող Մարինա Անդրեասյանի հարցին՝ Արմանիսի հանքի շահագործումը բնապահպանական ի՞նչ խնդիրներ կարող է առաջացնել, այն չի՞ ազդի զբոսաշրջության զարգացման վրա: «Սագամար» ընկերությունը խոստանում է 400 աշխատատեղ բացել, արդյո՞ք դա իրատեսական է, թե՝ ոչ, հարցերին պատասխանելով՝ Ա. Խաչատրյանը նշեց.
-Բնապահպանական խնդիրների մասով մասնագիտական կառույցներն իրենք պետք է գնահատական տան ու, հետևաբար, մենք էլ պետք է առաջնորդվենք այդ եզրակացություններով: Պետք է կարողանանք համադրել մարզի զարգացմանն ուղղված բոլոր կարևոր ուղղությունները, որպեսզի և՛ հանքերի շահագործումն իրականացվի շրջապատի համար նվազագույն վնասներով, թերություններն էլ արագ վերացվեն, և՛ կարողանանք զարգացնել զբոսաշրջությունը:
Մեր առաջնային խնդիրներից է իհարկե աշխատատեղերի ստեղծումը: Մարզպետարանը և համայնքները պետք է գրավիչ միջավայր ձևավորեն գործարարների համար, որպեսզի ներդրումներ իրականացվեն և աշխատատեղեր ստեղծվեն, ինչն էլ իրականացվում է:
«Հանրային ռադիոյի» թղթակից Լուսինե Սարգսյանը բնապահպանական խնդիրների վերաբերյալ հարց հնչեցրեց նաև Թեղուտի հանքավայրի շահագործման մասով:
Մարզի ղեկավարը հարցի հետ կապված ևս նշեց, որ հանքարդյունաբերությունը մարզի զարգացման համար կարևոր ուղղություններից է, սակայն կարևոր են նաև բնապահպանական խնդիրները և մարդկանց առողջությունը, հետևաբար բոլոր պատկան կառույցների կողմից ջանքեր են գործադրվում բնապահպանական խնդիրները բացահայտելու և դրանց լուծում տալու ուղղությամբ:
Վանաձոր համայնքի ՏԻՄ ընտրությունների ելքի հետ կապված «Ֆորտունա» ՀԸ հարցին ի պատասխան՝ Ա. Խաչատրյանը մասնավորապես նշեց.

-Մամիկոն Ասլանյանը քաղբանտարկյալ չէ: Եթե նա արդար է, չի դատապարտվի, հակառակ դեպքում՝ բոլորը, անկախ անձից, դիրքից, պաշտոնից, պետք է պատասխանատվություն կրեն: Վանաձորի ՏԻՄ ընտրություններում որևէ քաղաքական ուժ ոչ միայն՝ 50, այլև 40 տոկոսից ավելի քվե չի ստացել և որևէ քաղաքական ուժ միանձնյա չի կարող իշխանություն ձևավորել: 37-38 տոկոս ձայն ստացած քաղաքական ուժը իրավունք չունի խոսելու բոլոր վանաձորցիների անունից: Ի պաշտպաություն Մամիկոն Ասլանյանի դուրս էր եկել 70-80 մարդ, ոչ ավելի, և սա արդեն շատ բանի մասին է խոսում, նաև նրա, որ ընտրությունների ժամանակ մի շարք ապօրինի մեխանիզմներ են կիրառվել:
Համայնքների խոշորացման հնարավոր նոր գործընթացների հետ կապված «Ազատություն» ռադիոկայանի հարցին ի պատասխան՝ Ա. Խաչատրյանը նշեց, որ ներկայում նման քննարկուներ չկան: Լինելու դեպքում հանրությունը և լրատվամիջոցներն անպայման կիրազեկվեն:
Հանրային Հեռուստաընկերության լրագրողի՝ շարունակելու՞ եք առաջիկայում պաշտոնավարել՝ որպես Լոռու մարզպետ, հարցին պատասխանելով՝ Ա. Խաչատրյանը նշեց.
-Իմ պաշտոնավարման հարցը որոշում են ՀՀ վարչապետը և մեր քաղաքական թիմը: Այս պահի դրությամբ նման քննարկում չկա, և ես շարունակում եմ պաշտոնավարել՝ որպես Լոռու մարզպետ:
Մարզպետը պատասխանեց լրագրողների մի շարք այլ հարցերի ևս: